

երևակի, բայց և ոչ մէկն այս մտուրակաց իրարու մտեցած են գոնէ աստիճան մի, ուստի գիտնականներն կարճատես պէտք էին ըլլայ որ փոխանակ Ձ և Յ մտորակ տեսնելու մէկ միայն տեսած են. դարձեալ այդ աստեղ գիտաւոր ըլլալուն և ոչ իսկ հաւատք պէտք է ընծայել, որովհետեւ արդէն իսկ նոյն ժամանակ խիստ լաւ կրնային զանազանել գիտաւորն աստղէն, և ոչ այլ ծանօթութիւն մ'ունինք, թէ նոյն ժամանակներ տեսնուած ըլլայ գիտաւոր:

Արդ այս ամենն իմանալէն ետև՝ պատճառ մի չունինք սպասելու որ վերստին տեսնենք Բեթղեհեմի աստղն այս դարուս վերջը. վասնզի եթէ ստու-

գիւ աստղ մի տեսնուի, քսաներորդանգամ պիտի ըլլայ որ այս բանս պատահի, և սոսկ աստեղագիտաց համար հետաքննական պիտի ըլլայ. այսպիսի պարագայի՝ մէջ պիտի սահմանուի՝ ինչպէս եղած է 1766 հիւսիսային շքրջանակին վերայ տեսնուած աստեղ համար, և կամ 1885 Անդրոմեդէս միգամած աստեղ մէջ, վասն զի այդ տեղէն բաւական հեռու պատահած է մեծ հրդեհն՝ որոյ ճարակն գլխաւորապէս ջրածինն եղած է, և որուն բոցն ահագին հեռաւորութեան պատճառաւ մեզի շատ ուշ տեսանելի եղաւ և գրեթէ քիչ ժամանակ յետոյ արդէն կրակն անցեր էր:

*
ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ
 —————

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ՄԻ ՈՒՐԲԵՆՈՅՒՄ՝ ՄԷՋ Ի ՅԻՇԱՍԱԿ ԿՎԱՐԻՉ ՌԱՓՅԵԼԻ. — Տանուհինգ տարինք է ի վեր Ուրբինոյի քաղաքատեսչութիւնն (municipio) մտադիր էր յիշատակարան մի կառուցանել Ուրբինոյի մէջ ի յիշատակ իւր անմահանուն նկարչին Ռափայելի, որ և պիտի շինուէր նոյն քաղաքատեսչութեան գրամով և միանգամայն տէրութեան և հասարակութեան ձեռնտուութեամբ: Յիշատակարանիս նախատիպն պատրաստուելով՝ իմացուեցաւ որ շինութեան համար կարելոր է ութտուն

հազար փունկ. ուստի և հետամուտ եղան գումարիս հաւաքման: Արուեստագիտաց համամրցութեան առաջարկուելով ուրուագիծն և անոր շինութիւնը, յաղթող եղաւ Լուիգի Բելլի անուն Տորինեցի քանդակագործն, որոյ արդէն ծանօթ է ճարտարութիւնն իւր շինած յիշատակարանով մի ի յիշատակ Մ'ենտանայի պատերազմին մէջ ընկողներուն, որ կը դառուի ի Միլան, Ուսուցիչն Բելլի այն ինչ յանձնարարութիւնն ընդունած՝ սկսաւ իսկոյն արագութեամբ աշխատիլ, և այժմ յիշատակարանն աւարտած է: Մարմարին քարերն արդէն շինուած պատրաստ են, նոյնպէս նաև բոլոր արձաններն և որմախորշերու (nicchia) ութ շքադրամքն (medaglione) և խոյակներն ձուլուած, միայն կը սպասուի ճարտարապետական մասի գործադրու-

1 Միլին իտալոյ քաղաքներէն մին է Ուրբինոյ. արքեպիսկոպոսանիստ, ունի ձեմարան և դպրոց մի ազնուականաց. այլ եթէ ասանցմէ աւելի պարծանք մ'այլ ունի, այն է՝ զի 1483 Թուականին ընծայած է համարէն իտալոյ գերագոյն նկարչին Ռափայելի:

թեան կատարման, այնպէս որ առաջիկայ մայիս ամսոյն մէջ յիշատակարանս կրնայ հանդիսապէս կատարել իւր նաւակատեաց հանդէսը. հանդիսապէս ըսինք՝ վասն զի իտալիոյ թագաւորն այլ ներկայ պիտի գտուի հանդիսին, ի պատիւ աշխարհիս ամենէն մեծ նկարչին, որով և իտալիան կը փառաւորուի:

Յիշատակարանիս բարձրութիւնն տանուամէկ մետր պիտի լինի. իսկ խարիսխն գրեթէ եօթը մետր: Ամբողջութեան ընդհանուր զիծն հրաշալի է, հինգհարիւր թռականի աւանէն ընտիր և վայելուչ ոճով շինուած, որոյ վերայ պիտի սքանչանան տեսնողք, վասն զի պայծառ պիտի փայլի սա իւր ճարտարապետական զանազան մարմարիոններու, անագապղինձներու, մարմարեայ մանկիկներու խմբոց և ոսկեզօծեալ յատակաց միախառն բազմազունազարդութեամբն: Յատակի խարիսխն քառանկիւնածե է և մեծ սանդղով մի: Մոյթերու վրայէն կը բարձրանան անագապղինձ ութ շքադրամք, որք Ուրբինացոյն ութ ընտիր աշակերտաց կենդանագիր արձանքն են: Մեծ ներքնախարսխի մի և նոյն մոյթերու վերայ կը բարձրանան ռափայելեան հրաշալի զարգագործութեամբ ութ որմաստրոյնք և անագապղինձ տասն խոյակներ:

Մեծ պատուանդանին ծայրը կանգուն կեցած է անուանի նկարիչն, ի ձախ յենած, և աջովն՝ դէպ ի յառաջ քայլ մը առած, ձախ ձեռքով կը բռնէ նկարչաց գոյներու տախտակը, և աջով վրձինը, և գլուխն այլ քիչ մի վեր բարձրացուցած՝ ներշնչութիւն մը ընդունելու ոճով: Արգարեւ գեղեցիկ արձան մը, երկբուկէս մետր բարձր: Յիշատակարանիս ալ ու ձախ կողմերը կան անագապղինձ երկու ընտիր արձանք, յորոց մին կը ներկայացնէ զվերահնուրիները (Rinascenza), կին մը՝ իւր թէ նոր արթննալու

զիջքին մէջ. իսկ միւսն կը ներկայացընէ զՌոգին կերպարանաց (il Genio della forma) այսինքն է, երիտասարդ մարդ մի՝ որ պսակ մի յօրինելու զբաղած կը տեսնուի, երկու դէմք: Յիշատակարանիս մեծ ներքնախարսխն որ մեծ գեղ պիտի ընծայեն գործոյն ամբողջութեան երբ ոսկեզօծեալ են թակային վրայ հաստատուին. առջեւի և ետեւի կողմէն կ'երեւին մարմարիոնէ երեք մանկիկներու խմբեր, որք Ռափայելի գործերէն առնուած են. նոյնպէս նաև մեծ պատուանդանի առաջակողմեան և յետնակողմեան քառակուսի կոփածոյից մէջ գտուած երկու բարձրաքանդակաց պիտի ներկայացնէ զՌափայել յարգունիս քահանայապետաց Հոռովայ, և միւսն՝ զՌափայել որ կ'առաջնորդէ վատիկանեան սրահակաց ճարտարապետութեան:

* *

ԻՂՂՈՒՆԵՆՈՒ ՎՐՈՏ ԵՂՈՂ ՍԵՅԻ ՄԸ ԶԳՈՑՄՈՒՆՔ. — Քսանամեայ երիտասարդն Հարգէյ կը պատմէ, թէ մի քանի աւիս առաջ իւր ընկերով հետ գետին մէջ լողալու գացեր է, և նոյն գետին հինգ մետր խորութեամբ ջրոց մէջ սկսեր են երկու ընկերք լողալ: Երբեմն վեր ելնելով, երբեմն մինչև յատակն իջնելով և խճաքաբեր ժողվելով կը զբարձրանային: Գաղջ էր ջուրն և ախորժելի, որով և Հարգէյ գետոյն յատակը երկայն ժամանակ կենայն կ'ախորժէր, և միայն երբոր շնչառութեան համար բռնադատուէր՝ վեր կ'եղնէր ջրոյն երեսը: Այս իւր խաղերուն ժամանակ՝ երբ ջրոյն երեսէն կէս մետր վար էր և չէր տեսնուեր, յանկարծակի կռնակին վրայ սաստիկ հարուած մ'ընդունեցաւ. և այդ հարուածոյն զօրութեամբն բոլորովին յօղոյ դատարկացաւ. Հարգէյ թիթեբն, և շնչարգելութիւնն զօրացաւ. և քաջ լողացողն քարի մը նման ընկաւ և մնաց ջրոյն յատակը: Իսկ զարնոյն

էր իւր ընկերն, որ Հարդէլէի ջրոյ մէջ յապաղումը տեսնելով, գետին մէջ նետուեցաւ և սաստկապէս զարնուեցաւ Հարդէլէի, որ շնչարգելութեան և խղճուելու վիճակին մէջ ունեցած զգացումներն հետեւեալ կերպով կը նկարագրէ:

« Գրեթէ ամենևին խելքս վրաս չէր. արտասուելից ծնողքս և բարեկամներս չորս կողմն պաշարած կը տեսնէի. կենացս ամենայն դէպքերն, եթէ չար և եթէ բարի, և նոյն իսկ անտարբեր գործերն աչացս առջև ներկայացան ծանր ծանր: Մանկութենէս սկսեալ կենացս մանրամասն գործերն պայծառ կերպով կը յիշէի. կ'իմանայի՛ թէ խղճուելու վրայ եմ, և կը յիշեմ՝ թէ այսպէս մտածեցի. — Շատ չարատանջ չէ եղեր խղճուիլն: — Յետոյ ինքնիւրենս կը հարցընէի՛ թէ արդեօք մարմինս պիտի գտնեն, և կը գողայի յիշելով միայն՝ որ գուցէ երբեք չի գտնուի այն: Դարձեալ կը ջանայի գուշակել թէ արդեօք ընկերս իմացաւ ինձի ակամայ կերպով հասուցած չարիքը, և թէ հիմա կը փութայ գալու զիս ազատելու: — Յետոյ թագուցմ մտացս առջև կը բերէի. կարծես թէ կ'զգայի հողոյ կոյտին մարմնոյս վերայ ինկնայն, և կ'իմանայի որ մարը իրենց որդւոց կը պատմէին մահս վախ ազդելու համար անոնց վերայ: — Հեռուոր զանգակաց ձայներ կը լսէի: Եր տեսնէի պատկերներ, յորս ծիրանի գօտոյ գոյներն իրարու հետ կը խառնուէին, և այդ նկարներն թէպէտ զարմանք կ'ազգէին ինձ, այլ ոչ երկիւղ կամ նեղութիւն: Ամենայն ինչ չորս կողմն խաղաղ էր և հանգարա: Սովորականէ դուրս լաւ վիճակի մը մէջ կ'զգայի ինքզինքս, ջուրն ոչ ցուրտ, ոչ տաք, այլ ախորժելի բարեխառնութեամբ էր: — Վերջապէս զգացի՛ թէ զիս հողէն վեր վերուցին, և կամաց կամաց միտ ընդարձակ տեղ հանեցին, և տեսայ աշխարհս ոտիցս ներքեւ: »

Մնուշտ Հարդէլէ մեռնելու մտ էր այս նկարագրած վիճակին մէջ, իւր ընկերն քաջութեամբ ջրէն հանեց. և սաստիկ զօրաւոր շիմամբք, և արուեստական շնչատուութեամբ զգաստացուց զինքը, որ խտտի վրայ պատկած էր, մինչ ընկերն կը գործէր:

* *

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑ ԲԱԶՄԱՄԱՐԴՈՒԹԻՒՆԸ. — Ահաւաստիկ գերմանական մեծամեծ քաղաքներու բնակչաց թիւն, ըստ տեղեկութեան վերջին համարաւ կայութեան:

- Բեռլին 1,578,794. — Մոնակոյ 349,024. — Բրեսլաւիա 335,186. — Համբուրգ 323,923. — Լիբաւիա (Լայպզիգ) — 296,025. — Կոլոնիա 281,681. — Դրեստա 276,522. — Մագդեբուրգ 202,284. — Փրանկփորտ Մայնի վրայ 179,985. — Հաննովէր 163,593. — Քէօնիգսբէրգ 161,666. — Դիւսելդորփ 144,642. — Ալտենա 144,249. — Նորիմբէրգ 143,390. — Ստոտգարտ 139,817. — Ելէնից 139,958. — Ելբերփէլդ 125,899. — Բրեմնա 125,634. — Դանցիկ 120,333. — Ստետտին 116,228. — Բարմէն 116,114. — Էս-լա-Շարէլ կամ Սախէն 103,470. — Հալէ 101,401. — Բրունզուիք 101,047.

* *

ԿԵՐԱՅԻՆՆԵՐԻՆԱՑ ՍՊԱՌՈՒՄԸ Ի ՊԱՐԻՍ. — Սեննայի օստիկանութիւնն հրատարակեց Պարիսու կերակրոց (պաշար) վիճակագրութիւնը ըստ որում 1893 տարւոյ շրջանին մէջ Villette ի անասնոց վաճառանոցին մէջ մտեր են գրեթէ 3 միլիոն կենդանիք, այսինքն է 354,128 կով և եղն. 192,507 որթ. 1,899,584 խոյ և 509,093 խոզ: Պարիսու չորս սպանդանոցաց մէջ մտրթուեր են 295,364 կով և եղն. 249,243 որթ. 1,964,589 խոյ, ոչխար և այծ և 327,049 խոզ, որ է ըսել՝ 2,836,255 անասուն:

Գլխաւոր վաճառանոցաց մէջ ծա.

խուեր են 47,022,358 հազարադրամ
միս, այսինքն է, 3,926,457 հազար
ազարամ աւելի քան 1892 տարին.
22,543,160 քիլո հաւեղէնք և որպք.
2,128,454 քիլո կենդանեաց փորո-
տիք. 11,506,205 քիլո պտուղ և ըն-

դեղէնք. 6454 կենդինար ցորեն և
այլւր. 31,873,431 քիլո ձուկ և փափ-
կամորթք. 10,518,695 քիլո կարագ.
16,048,996 քիլո հաւկիթ. 7,358,697
քիլո պանիր. 35,331,000 ոտորէ և
244,172,850 քիլո պաքսիմատ.

ԱՋԴ

Կը խնդրեմք « Բազմավէպ Հանդիսարամի » ընթերցող Յարզոյ բաժանորդներէն, որոնք տա-
կաւիմ չեն յղած 1894 ամի բաժանորդագիւմն, փութամ յղել. որպէս զի ժամանակիմ ընդունին
մասն 1895 ամին թերթերն, որոյ բաժանորդագրութիւնն կը սկսի նոյեմբեր ամսոյ սկիզբէն. ամոնց
որ մինչև դեկտեմբեր ամսոյն վերջերն չեն վճարեր 1895 ամի բաժանորդագիւմն, և կամ կամ
խաւ չեն իմացըմնք մեզ իրեմց հասնութիւնն որ շարունակեմք յղել մեր թերթերը՝ թէ ոչ, ըստ կա-
մոմի պիտի դադարի. և զայս ամոր հասմար կ'իմացնեմք զի ըստ չափոյ բաժանորդաց պիտի յա-
ւելումք և կամ մուգեցնենք առաջիկայ տարւոյ տպագրելի օրինակները: